



2. ԽԻՊԻԼԿԻ ՔՈԼՈՋ

Ժուկով ժամանակով աղի մե գելնա զվոնն՝ աշխար տեսնա-
կէրթա կէրթա, կը հասնի տեղ մե, կը տեսնա՝ հանդի վըր խաչ-
ճամպուն նստուկ է հալվոր մարդ մե, մըջ մտածմունքին՝ թղրեխ կը
քաշի: Տղեն կը մոտենա հալվորուն, բարև կիտա, բարև կառնե, կը
հարցու:

— Պա՛պե, իդա ի՞նչ ճամպա է:

Հալվոր կըսե.

— Աջ կը տանե դըպա բախտ, ձախ կը տանե դըպա անբախ-
տութեն:

Տղեն կը մտածե, կը մտածե, մըջ մտքին կըսե.

— Քոռցե՞ր իմ էրթամ դըպա անբախտութեն, կէրթամ բախտի
ճամպով:

Հալվոր կը մնա ուր տեղ, տղեն կը բռնե աջ ճամպեն: Կէրթա,
կէրթա, կը հասնի խորունդ ձորու մե, կը տեսնա մըջ ձորուն հանդի
էրկու մարդ կը դապշտին, կը քաշքշին, կը կովին հըտ չիրար:

— Տղե՛կներ, չորի՞ն կը կովիք,— կըսե:

— Բարի օտարական,— կըսե էն մեկ,— ես ու իմ պղտիկ ախ-
պեր կը դապշտինք հըտ չիրար, չընք կոնա հուն չելնա,— մեր պա-
պու թողած ժառանգութեն մըջ մըզի հավսար բաժնի: Ես կըսի՞մ
աէս՝ ի՛մն է՞, էն կըսե աչէ՛, ի՛մն է՞: Մըզի խելք մե սորվըցու:

— Չեր ժառանգութեն ի՞նչ է:

— Հե՛, ջա՛նըմ,— կըսե էն մեկեւլ,— մեկ խիպիլկի քոլոզ, մեկ հատ լե ճոկան: Քոլոզ դնիս՝ շըս էրեւա, ճոկան զարկիս, քըզի յուր ըսիս՝ կը տանե: Իդա՛ է մեր ժառանգութեն:

— Ա՛խպըրտիք,— կըսե տղեն,— ես զձըզի կը բարիշցում՝ կը վերցում զքոլոզն ու ճոկան, էլ՝ ձեր մեջ նա՛ խոսք ու խորոթա, նա՛ կուրվ կէղնի:

— Հա՛, ա՛խպեր, օղորմի քու պապուն, վերցու իդա գլխացա-վանք:

Տղեն կը վերցու զքոլոզ ու ճոկան, կըսե.

— Դե՛, ճոկան, ընձի տար թագավորի քոշկ ու սարեն, ընդոր խորոտիկ աղջկա մոտ:

Կէրթա: Ըդի օր կէրթա, էրկու ախմախ ախպրտիք ամեկ ուր ամապով կէրթա ուր տուն, մըջ ուրանց մտքին շնորակալ կէղնիս տղին, օր էդմալ արդար դատ ու դատաստան տեսաւ, ուրանց ազա-տեց խոսք ու խորաթից ու կովից:

Տղեն կէրթա կը հասնի թագավորի քոշկ ու սարեն, կը մտնա ներս, կը հանե զքոլոզ, ճոկան կը դնե մեկ դեն, թագավոր նագահան կը տեսնա, կը հարցու:

— Դու ի՛մալ մտար իմ քոշկ ու սարեն:

— Թագավոր ապրած,— կըսե տղեն,— էկեր իմ քըզի խնդըր-վիմ, օր ընձի գործ մե տաս, դատիմ, բանիմ, զիմ գլուխ պահիմ:

— Աղեկ,— կըսե թագավոր,— ընձի գործ շատ կա, քըզի գործ մե կիտամ, հմա շա՛տ ծանտը է:

— Դու տուր, թող ծանտը էղնի:

— Դե,— կըսե թագավոր,— գնա իմ աղջկա քոշկ ու սարի դռան վրեն կանի, օր իսան-միսան, գել ու գազան, ջուն ու ջանա-վար շը մտնան ներս, շը մոտենան ուրին: Թե կոցար զէդ գործ էրիր՝ էրի՛ր, շէրի՛ր՝ գլուխդի կտրել կիտամ:

— Վըր իմ աչաց,— կըսե տղեն:

— Աստված քու հետ, գնա՛,— կըսե թագավոր:

Կէրթա, շատ կէրթա, քիչ կէրթա, էդի մինակ աստված գինա, կը հասնի սարի մե կող, թագավորի աղջկա քոշկ, վըր դռան կը կանի, շատ օր կը կանի՝ շը համբերե, կը մտնա աղջկա յոդեն: Մըջ յոդին աղջիկ մե նստած՝ իմալ ջեյրանի ձագ, հըտ ուր յերկեն մա-զերուն կը խաղա, մատներ կը շողան՝ իմալ վառած մոմ, ուրնե ձուն ու կաթ կը թափի: Աղջիկ ըդոր շը տեսնա: Քիչ մը լե հըտ ուրին կը խաղա, օր կը բեզրի՝ գելնա քնի: Մըջ կես գիշերին աղջիկ աչքեր կը բանա, կը բացե զպատուհան, կը տեսնա հանդե դե մե, բերան բոց ու կրակ՝ էկա՛վ-էկա՛վ կանաւ պատուհանի տակ:

— Թագավորի աղջիկ,— ձեն կիտա դև:

— Ի՞նչ է,— կըսե աղջիկ:

— Էկեր իմ քրզի տանիմ:

— Յո՛ւր:

— Իմ տուն, էղնիս ընծի կնիկ:

Կըսե կը մտնա ներս, օր կը մտնա ներս՝ տղեն կը տեսնա՝ հանդեպ դև հասավ գրկեց զաղջկան, պաղեց, պագագեց, խուլասա՝ գրկեց աղջկան տարավ ուր տուն, ուր գանձ ու օսկիք ցուցուց:

— Ճոկա՛ն,— կըսե տղեն,— զիսի տար դևի տուն:

Ձխիպիլկի քուրզ կը դնե, աչք կը խպու կը բացե՝ կը կանի մըչ դևի տուն, կը լսե.

— Թագավորի աղջիկ, իդա գանձ ու օսկին քրդի կիտամ, էղի ընծի կնիկ:

— Աղեկ,— կըսե աղջիկ,— չուրի վաղ ընծի ժամանակ տուր:

— Տվի,— կըսե դև,— չուրի վաղ՝ քրզի ժամանակ: Ես կէրթամ օլորտիմ. քրզի պատվիրանք:— Հանդե իմ դռան մոտ օսկոն ճոկան մե կա դրուկ, կը վերցուս: Ժամանակ օր կը մոտենա՝ իրեք հաղ բանձր կը թխկթխկցուս, ես դիմնամ՝ օր դու իմ կնիկն իս, ես՝ քու իրիկ. բան է՝ օր իրեք հաղ թեթև թխկթխկցուս՝ էդի նշան է, օր դու խաբուլ չիս, ես էլման դև՝ գիկամ քու մոտ, մեր հաշիվ մաքրինք:

— Խաբուլ իմ,— կըսե աղջիկ:

Դեն ուրախ-զուրախ կէրթա, աղջիկ կը մնա մինակ: Մեկ լե նագեհան տղեն կը կանի ուր չառեջ:

— Յա՛,— կը զարմանա աղջիկ,— դու ո՞ն իս:

— Ես քու պապ Թագավորի ծառան իմ, էկեր իմ օր քրզի պահենք-պաշտպանենք, հմա էսպես եղավ:

Աղջկա սիրտ կը կպի տղին, կըսե.

— Յամա՛ն, փա՛խի, դև քրզի կըսպանե:

— Ըսկի մը վա՛խենա, դև չը կոնա ընծի մոտենա: Շուտ չելի, զդևի գանձ ու օսկիք առնինք էրթանք: Ճո՛կան, զմըզի տար գանձ ու օսկու մոտ:

Կըսե, չըսե՝ էրկուսով կը թռնան կէրթան հասնին Թագավորի քոշկ ու սարեն: Թագավոր, օր կը տեսնա աղջկան՝ շատ կը խնդանա, կը դառնա տղին.

— Տղա՛,— կըսե,— չուրի մկա ո՞ն օր իմ աղջկա քոշկ ու սարի պաշտպան է էղի, չը կոցեր է ուր գլուխ ազատե դևուց, դու ի՞մալ զգլուխդի ազատիր, իմ աղջկան լե բերիր, հը՛:

Տղեն չոդա ուր փրուզեն կը բանա, կըսե.

— Թագավոր ապրած, ես քու աղջիկ բերի թաալիմ էրի քրչի,
ճամպեն մենք չիրար խոսք ինք տվի, խոսք ինք առի, քու կամքն
ի՞նչ է:

— Իմ կամք բարի է, օ՛րգի, խարուկ իմ:

Տղեն կըսե.

— Մնաց մեկ բան, շուրի դևուն շրսպանիմ՝ մըզի շրս պսակի:

— Խարուկ իմ, աստված օգնական,—կըսե թագավոր:

Տղեն կէրթա, կը հասնի գևու բերդ, կը տեսնա՝ դև կատղի,
փոփոտեր է, բերնեն ու աչքերուց կրակ կը թափի, հմա՛լ օռնոց
մե թալի աշխար՝ օր չէ՛ թե իսան-միսան, գել ու գագան, ջուն ու
ջանավար, քար ու թուփ, ջուր ու հող կը դողան: Կը քաշե զթուր,
զդլուխ կը կտրե, դառնա գիկա: Թագավոր հրամանք կիտա, օր
հարսընթի պատրաստութեն տեսնան: Յոթ օր, յոթ գիշեր հարսնիք
կէնին, ղըդոց կը հասուն ուրանց մուրազին, դուք լե հասնիք ձեր
մուրազին:

